Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 868 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԶԳԱՅԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱՑԻԱՅԻ ՍԵՆՅԱԿԻ ՍՏԵՂԾՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Թերապիաների որակի բարելավման և արդյունավետության բարձրացման նպատակով Լուսէ մանկական վերականգնողական կենտրոնում նախատեսվում է ստեղծել զգայական ինտեգրացիայի սենյակ հաշմանդամություն ունեցող երեխաների համար, որը նպաստելու է կարևոր և առանցքային հմտությունների զարգացմանը, ներառյալ՝ ընդհանուր ճանաչողության, ուշադրության կենտրոնացման, վարքային և հուզակամային դրսևորումների, գործնական և վերացական մտածողության ձևավորմանը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Հայաստանի Հանրապետությունում Ճապոնիայի դեսպանատուն (հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բաբայան փողոց 23/4)
4.	Ծրագիրը կատարողը	«Երևան իմ սեր» հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բաղրամյան 24, ՀՎՀՀ՝ 00100778)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Իսրայելյան 3, Լուսէ կենտրոն Բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	20,415,446 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք և հաշմանդամություն ունեցող շուրջ շուրջ 350 երեխա
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2022 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2023 թվականի մայիսի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Հաշմանդամություն ունեցող երեխաների համար զգայական ինտեգրացիան խթանող հատուկ պարագաների, սարքավորումների և կահավորանքի ձեռքբերում կամ ներմուծում՝ 20,415,446 դրամի չափով, նախատեսվում է իրականացնել 2022 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2023 թվականի մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում:

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Մանկական ուղեղային կաթվածով երեխաների համար հատուկ ամրացումներով ճոճանակի ներմուծում՝ 108,000 դրամ: 2. Զգայական հավաքածուի ներմուծում՝ 112,000 դրամ: 3. Զգայական սեղմող աթոռի ներմուծում՝ 168,000 դրամ: 4. Զգայական անկյան հավաքածուի ներմուծում՝ 2,137,000 դրամ: 5. Կառուցողական և հավասարակշռության հավաքածուի ներմուծում՝ 85,000 դրամ: 6. Սկուտերի հավաքածուի ներմուծում՝ 33,746 դրամ: 7. Կտորե խողովակի ներմուծում՝ 23,850 դրամ: 8. Հավասարակշռության «գետի քարերի» հավաքածուի ներմուծում՝ 18,450 դրամ: 9. Փափուկ մատրասի ներմուծում՝ 135,000 դրամ: 10. Զգայական բաճկոնի (փոքր չափս) ներմուծում՝ 29,250 դրամ: 11. Զգայական բաճկոնի (միջին չափս) ներմուծում՝ 33,300 դրամ: 12. Զգայական բաճկոնի (մեծ չափս) ներմուծում՝ 34,650 դրամ: 13. Դիմադրության թունելի ներմուծում՝ 38,250 դրամ: 14. Վիրտուալ իրականության ակնոցի ներմուծում՝ 223,650 դրամ: 15. Հատակի ծածկի ձեռքբերում տեղական շուկայից՝ 730,000 դրամ: 16. Պրոյեկտորի ձեռքբերում տեղական շուկայից՝ 265,000 դրամ: 17. Երաժշտական սենսորային պատի ձեռքբերում տեղական շուկայից՝ 1,890,000 դրամ: 18. Հատակի 3D հոլոգրաֆիկ պրոյեկտորի ձեռքբերում տեղական շուկայից՝ 1,900,000 դրամ: 19. Աուդիո համակարգի ձեռքբերում տեղական շուկայից՝ 242,000 դրամ: 20. Կրկնակի գլաններով մարմինը սեղմող փափուկ գույքի ձեռքբերում տեղական շուկայից՝ 138,000 դրամ: 21. Համակարգչի ձեռքբերում տեղական շուկայից՝ 612,800 դրամ: 22. Օդորակչի ձեռքբերում տեղական շուկայից՝ 939,000 դրամ: 23. Մանկական կրթական 2D խաղերի ծրագրի ստեղծման ծառայությունների ձեռքբերում՝ 3,510,000 դրամ: 24. Գերզգայնությունը կարգավորող և հանգստացնող լուսային և պղպջակներով գլանի և կից նստարանի ձեռքբերում տեղական շուկայից՝ 300,000 դրամ (չեն ակնկալվում հարկային արտոնություններ): 25. Լուսային սեղանի ձեռքբերում տեղական շուկայից՝ 120,000 դրամ (չեն ակնկալվում հարկային արտոնություններ): 26. Լուսային պատի ձեռքբերում տեղական շուկայից՝ 220,000 դրամ (չեն ակնկալվում հարկային արտոնություններ): 27. Բիզիբորդի ձեռքբերում տեղական շուկայից՝ 300,000 դրամ (չեն ակնկալվում հարկային արտոնություններ):

		28. Ակտիվ/խաղային սենյակի հավաքածուի ձեռքբերում տեղական շուկայից՝ 1,001,500 դրամ (չեն ակնկալվում հարկային արտոնություններ): 29. Սողալու ու դիմադրության թունելի ձեռքբերում տեղական շուկայից՝ 30,000 դրամ (չեն ակնկալվում հարկային արտոնություններ): 30. Հոտարձակող վահանակի ձեռքբերում տեղական շուկայից՝ 95,000 դրամ (չեն ակնկալվում հարկային արտոնություններ): 31. Ոտքերի մանիպուլյատիվ տախտակի ձեռքբերում տեղական շուկայից՝ 30,000 դրամ (չեն ակնկալվում հարկային արտոնություններ): 32. Գրելու հմտությունները զարգացնող «Ամպիկ» տախտակի ձեռքբերում տեղական շուկայից՝ 63,000 դրամ (չեն ակնկալվում հարկային արտոնություններ): 33. Լեդ օպտիկական լույսերով հավաքածուի ձեռքբերում տեղական շուկայից՝ 989,000 դրամ (չեն ակնկալվում հարկային արտոնություններ): 34. Բեռների միջազգային փոխադրման ծախսեր՝ 3,500,000 դրամ: 35. Աուդիտորական ծառայությունների ձեռքբերում՝ 360,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	1. Բեռների միջազգային փոխադրման ծախսեր՝ 3,500,000 դրամ: 2. Աուդիտորական ծառայությունեերի ձեռքբերում՝ 360,000 դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Չեն նախատեսվում
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25 -րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

02.12.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ